

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

(26 փետրուարի 2021 թ).

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարուած Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողովի ընթացքում անդրադարձ կատարելով արցախեան պատերազմին, Հայաստանի ու Արցախի առջեւ ծառացած յետպատերազմեան ներքին եւ արտաքին մարտահրաւէրներին, նաեւ համակողմանիօրէն քննարկելով հայրենիքում տեղ գտնող զարգացումները, մասնաւորապէս փետրուարի 25-ին ՀՀ զինուած ուժերի հրամանատարութեան յայտարարութեան եւ ՀՀ վարչապետի արձագանքի առիթով ստեղծուած դժուարին կացութիւնը՝ մեր խոր մտահոգութիւնն ենք արտայայտում՝

— պատերազմի հետեւանքով հայրենիքում տիրող քաղաքական ծանր իրադրութեան առընչութեամբ, որն օրէցօր խորացնում է տնտեսական, սոցիալական եւ հասարակական խնդիրները, էլ աւելի ծանրացնում բարոյահոգեբանական անկեալ վիճակը,

— առկայ իրավիճակի յաղթահարման ուղղութեամբ ՀՀ իշխանութիւնների կատարած քայլերի անարդիւնաւէտութեան, հասարակական-քաղաքական կարեւորագոյն հարցերի վերաբերեալ խնդրայարոյց դիրքորոշումների առընչութեամբ, որոնք յանգեցնելու են նոր պառակտումների, առկայ ներքին եւ արտաքին մարտահրաւէրների ահագնացման, հայրենիքի ապագայի հանդէպ անվստահութեան արմատաւորման եւ արտագաղթի՝ լուրջ սպառնալիք դառնալով Հայաստանի անվտանգութեան եւ Արցախի յետագայ վերականգնման ու առաջընթացի համար:

Անընդունելի ենք նկատում քաղաքական պայքարի շրջանակներում սերմանուող ատելութիւնը եւ անհանդուրժողականութիւնը, փոխադարձ անարգանքն ու հայհոյախօսութիւնը, քաղաքացիների զգացմունքների շահարկումը, ի հետեւանս որոնց նաեւ երկրի հեղինակազրկումը միջազգային հանրութեան առջեւ:

Յորդորում ենք՝

— իրաւապահ մարմիններին՝ զերծ մնալ խաղաղ ցոյցերի եւ հաւաքների ժամանակ բռնութիւններից եւ անհամաչափ ուժի կիրառութիւնից,

— մեր ժողովրդի զաւակներին՝ պահպանել հանդարտութիւն, վարուել խոհեմութեամբ, օրինայարգութեամբ եւ ամենայն պատասխանատուութեամբ՝ չդադարելով լինել նախանձախնդիր եւ հետեւողական հայրենիքի շահերի պաշտպանութեան գործում:

Վերահաստատելով առկայ կացութեան հանգուցալուծման շուրջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտայայտած դիրքորոշումները եւ օրհասական վիճակի լրջագոյն ցուցիչ դիտարկելով հայրենիքի անվտանգութեան երաշխաւոր հանդիսացող Հայոց բանակի որդեգրած մտահոգ կեցուածքը՝ կոչ ենք անում Ազգային ժողովին եւ իշխանութեան միւս կառույցներին՝ անհրաժեշտ հետեւութիւնները անել եւ պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ գործել ի սէր հայրենիքի եւ ազգի՝ նոր հիասթափութիւնների չառաջնորդելու մեր ժողովրդին հայրենիքում եւ սփիւռքում:

Կոչ ենք անում ՀՀ իշխանութիւններին եւ ընդդիմադիր ուժերին՝ նպաստել համերաշխութեան հաստատմանը եւ խնդիրների հանգուցալուծումը փնտրել միմիայն համազգային ներուժի համախմբման մէջ՝ հեռու պահելով ժողովրդին հնարաւոր բախումներից:

Նաեւ յորդորում ենք զգուշաւորութիւն դրսեւորել Հայոց բանակի եւ զօրականների առընչութեամբ գնահատականների հարցում եւ նպաստել մեր բանակի սրբազան առաքելութեան արգասաւորմանը:

Ստեղծուած իրավիճակում Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին պիտի շարունակի ամենայն ջանք ի գործ դնել լարուած մթնոլորտի լիցքաթափման եւ ներհասարակական միասնականութեան ու համերաշխութեան վերականգնման ուղղութեամբ:

Աղօթում ենք ճգնաժամի արժանապատիւ յաղթահարման համար՝ հայցելով Ամենողորմ Աստծուն Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ անվտանգ եւ խաղաղ պահել հայրենի մեր երկիրը եւ մեր ժողովրդին:

